

Նախագծային աշխատանք

Թեմա «Մեր երազած քաղաքն ենք կառուցում
Հայաստանի Տավուշի և Գեղարքունիքի
մարզերում»

Նախագծի ղեկավար՝ աշխարհագրության
ուսուցչուհի Ա. Հարությունյան
Կատարողներ՝ 9-րդ դասարանի աշակերտներ
Է. Վիրաբյան, Ա. Դավիդյան, Ա. Մխիթարյան, Է.
Արզումանյան, Լ. Մարտիրոսյան



- Թեմայի արդիականությունը :
- ՀՀ ում(բացառությամբ Երևանի) չկան մեծ և ինովացիոն քաղաքներ, կառուցած քաղաքը պետք է լինի այնպիսին,որ կարողանա թեթևացնել Երևանի ծանրաբեռնվածությունը:



Նախագծի նպատակները և խնդիրները

Նախագծի գլխավոր նպատակը՝

Կառուցվող քաղաքը պետք է առաջին հայացքից ներկայանալի լինի իր էկոլոգիական գեղեցկությամբ՝ Սևանից Դիլիջան ընկնող տարածքի յուրահատուկ համայնապատկերով: Խնդիրները՝

Ա. ուսումնասիրել մարզի էկոլոգիան, երկրաբանությունը, հիդրոլոգիան, օդերևութաբանությունը:

Բ. Հավաքել և տեղայնացնել տեղեկատվություն Սևանի և Դիլիջանի տարածաշրջանների վերաբերյալ:

Գ. գերիսոնավ վայրերում ճանապարհների կառուցման ժամանակ հաշվի առնել սողանքային երևույթները:

Դ. գործողությունների առաջարկ



Նոր Դիլիջան





Օդերևութաբանություն




- Նոր Դիլիջանը գտնվում է, հիմնականում բարեխառն կլիմայական գոտում
- Քաղաքի տարածքով փչում են մշտական հյուսիս-արևելյան քամիներ

Երկրաբանություն

ՀՀ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԶԱՐՏԵՁ

Մասշտաբ 1:2 000 000



- Այստեղ բացակայում են հարթ տարածքները. ապրելու համար դժվարամատչելի են:
- Համեմատած ՀՀ այլ տարածաշրջանների՝ ավելի սեյսմակայուն գոտի է

Երկրաբանություն

Նոր Դիլիջանը գտնվում է Փամբակի և Արեգունու ծալքաբեկորավոր լեռնաշղթաների մեջտեղում: Համեմատած հրաբխային շրջանների՝ ավելի կայուն սեյսմիկ գոտի է: Սակայն ծալքաբեկորավոր լեռները դեռ շարունակում են լեռնակազմավորման պրոցեսը, որի ընթացքում նրանք անընդհատ բախվում են իրար՝ առաջացնելով նոր ծալքաբեկորավոր լանջեր: Տարածքը բավականին խոնավ է, իսկ խոնավ շրջաններին բնորոշ են սողանքները, քաղաքում սողանքներից խուսափելու համար քաղաքի ավելի բարձրադիր սահմանները կշրջափակվի դարավանդներով

Օդերևութաբանություն

Քաղաքը գտնվում է հյուսիս-արևելյան մշտական քամիների ազդեցության գոտում, Նոր Դիլիջանը գտնվում է բարեխառն լեռնային կլիմայական գոտում, իսկ քաղաքի ծայր հյուսիսը՝ Չափավոր շոգ կլիմայական գոտում:



Քիմիական

Աղստև



Սևանա լիճ



Յիդրոլոգիա

Քաղաքի հիդրոլոգիական ցանցը բավականին լավ է զարգացած: Քաղաքը գտնվում է Սևանա լճի ափին, քաղաքով է անցնում Աղստև գետը, տարվա ընթացքում տեղումների միջին քանակը ավելի բարձր է, քան պետության այլ շրջաններում: Սևանա լիճը, օգտագործելու ենք զուտ ռեկրեացիոն նպատակներով՝ հաշվի առնելով Սևանա լճի ծաղկումը և մակարդակի իջեցումը: Սևանա լճից ջրառը Նոր Դիլիջանի քաղաքապետարանի պատասխանատվության տարածքում արգելվում է: Քաղաքի բոլոր հիդրոլոգիական պահանջները կբավարարենք Աղստև գետի շնորհիվ: Քաղաքի հիդրոլոգիական ցանցի մեջ մտնում է նաև քաղաքի կոյուղին, որը պարտադիր կերպով անցկացվելու է քաղաքի յուրաքանչյուր փողոց և տուն:

Նոր Դիլիջանի վարչական շրջանները


Քաղաքում կա՝

- 10 դպրոց
- 3 գրադարան
- 5 ռեստորան
- 4 հյուրանոց
- Թատրոններ, թանգարաններ, կինոթատրոններ, սրճարաններ և այլն:



Էլեկտրաէներգետիկ ոլորտ


- Աղստև ՋԷԿ



- Արտադրում է տարեկան **100000Կվ** Էլեկտրաէներգիա
- Էլեկտրաէներգիայով է ապահովում Նոր Դիլիջանի **50%**ը

Էլեկտրաէներգետիկ ոլորտ


- Նոր Դիլիջան հողմակայան



- Արտադրում է տարեկան **25000Կվ** էլեկտրաէներգիա
- Էլեկտրաէներգիայով է ապահովում Նոր Դիլիջանի **12.5%**ը

Էլեկտրաէներգետիկ ոլորտ

- Նոր Դիլիջան արևային էլեկտրակայան




- Արտադրում է տարեկան **40000Կվ** էլեկտրոէներգիա
- Էլեկտրաէներգիայով է ապահովում Նոր Դիլիջանի **37.5%**ը



Արտադրական ոլորտ

- Նոր Դիլիջանի գինու և կոնյակի գործարան




- Արտադրում է տարեկան **20000L** խաղողի սպիրտ
- Ապահովում է **5000** աշխատատեղ



Արտադրական ոլորտ


- «Նոր Դիլիջան» կաթնամթերքի գործարան



- Արտադրում է տարեկան **800տ** կաթնամթերք
- Ապահովում է **2000** աշխատատեղ

Արտադրական ոլորտ

- **Նոր Դիլիջանի
Կարի Ֆաբրիկա**




- Տալիս է տարեկան **40տ** արտադրանք
- Ապահովում է **5000** աշխատատեղ



Բնակելի շենքեր

- Հարկայնությունը՝
7-12 հարկ
- Պատշգամբ-այգի
- Ավտոկայանատեղի
- Խաղահրապարակ
- Տանիքին արևային
պանելներ



Դիզայն

Նոր Դիլիջանը կառուցված է լինելու բարձրահարկ շենքերից, սեյսմակայուն , ճոճվող հիմքերով , ցածրահարկ շենքերը շատ քիչ տեղ կզբաղեցնեն: Քաղաքի շենքերը լինելու են ժամանակակից, բարձրակահարկ` քաղաքում հնարավորինս մեծ բնակչություն ապահովելու համար: Շենքերի բոլոր հարկերում լինելու են պատշգամբ-այգիներ, որոնց մուտքը լինելու է բնակելի տներից: Պատշգամբը ամբողջ հարկի համար լինելու է մեկ ընդհանուր, ընդարձակ : Պետական շինությունների, քաղաքի բոլոր շենքերի տանիքներին , տեղադրված են լինելու արևային պանելներ:

Շինարարություն

Քաղաքի շինարարությունը բավականին բարդ է լինելու, քանի որ այն գտնվում է լեռնային գոտում: Քաղաքի ընդերքում բացակայում են տուֆը, բազալտը, գրանիտը և այլ շինարարական կարևոր ապարներ:


Այդ պատճառով քաղաքի շինարարությունը հիմնված է լինելու ՀՀ այլ տարածաշրջաններից բերվող շինարարական

Նյութերի վրա: Նյութերի տեղափոխումը կատարելու ենք փակ՝ ծածկով մեքենաներով, որպեսզի մաքսիմալ քիչ վնաս հասցնենք էկոլոգիային՝ չաղտոտելով շրջակա միջավայրը: Քաղաքի շենքերի երեսպատումը կիրականացվի ավելի


բաց գույն ունեցող քարերով, դրանք հիմնականում կլինեն դեղին տուֆը և մարմարի բաց երանգները: Նոր Դիլիջանի

բոլոր շինությունները ունենալու են երկաթ-բետոնե այսպես ասած կմախք, ճոճվող հիմքերով, ավելի բարձրահարկ

շենքերի սեյսմակայունությունը ապահովելու համար:



Նոր Դիլիջանի
քաղաքապետարան





Կ. Սարգսյան պողոտա

**Կենտրոնական
հրապարակ**

Կյուրանոց




Նոր Դիլիջանի
պատմության
թանգարան



Հերոսների ճեմուղի

Նոր Դիլիջանի
Պետական
Համալսարան



Վազգեն I-ի
պալատ

Ն.Ս.Օ.Տ.Տ Վազգեն I
եկեղեցի



Ս. Մելքոնյան
պողոտա

Ճարտարապետություն

Քաղաքի կենտրոնական հրապարակը նվիրված է ՀՀ հերոսներին, հրապարակի կենտրոնում գտնվում է հերոսների ճեմուղին, որտեղ գտնվելու են ՀՀ հերոսներին նվիրված ցուցանակներ և հուշարձաններ: Կենտրոնական հրապարակից դուրս են գալիս չորս պողոտա՝ Վ. Սարգսյան, Մ. Մելքոնյան, Ա. Հովհաննիսյան, Վազգեն I-ի: Հրապարակի հյուսիսում գտնվում է Նոր Դիլիջանի քաղաքապետարանը, հարավում՝ Նոր Դիլիջանի պետական համալսարանը, արևելքում՝ Նոր Դիլիջանի տարածաշրջանի պատմության թանգարանը, արևմուտքում՝ քաղաքի ամենամեծ հյուրանոցը: Հրապարակում է գտնվում նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն I եկեղեցին:

Էկոլոգիա

Քաղաքի հիմնական Էկոլոգիական խնդիրը Սևանա լճի մակարդակի իջեցնում է, դա կապված է նրանով, որ Սևանա լիճ է լցվում Սոթքի ոսկու հանքավայրի տաք գործարանային ջրերը, և Սևանից կատարվում է մեծ ծավալով ջրառ: Այս խնդիրները բարեբախտաբար ունեն իրենց լուծումները: Նոր Դիլիջան քաղաքը, ինչպես արդեն նշել ենք, բավականին մեծ է, բայց քաղաքը Սևանա լճից ջրառ չի իրականացնելու, քաղաքը իր խմելու և ոռոգման խնդիրները կլուծի Աղստև գետի ջրերով, իսկ տնտեսական գործառույթներում կարող ենք օգտագործել քաղաքի գործարանային տաք ջրերը: Այս բոլոր ծրագրերը իրագործելով՝ կկարողանանք բարձրացնել Սևանի մակարդակը, իսկ Սոթքի հանքին կից կկառուցենք պոչամբարներ, որտեղ կամբարվեն Էլեկտրոլիզի արդյունքում առաջացած տաք ջրերը: Ինչպես արդեն ասաց օդերևութաբանը՝ քաղաքի տարածքով փչող քամիները հյուսիսարևելյան են, այդ պատճառով բոլոր գործարանները պետք է կառուցվեն քաղաքի ծայր արևելքում կամ քամու ազդեցության գոտուց այն կողմ, որպեսզի գործարանների մթնոլորտային թափոնները չլցվեն քաղաք: Նոր Դիլիջանը Էկոլոգիական քաղաքի վառ նմուշ է, քանի որ այստեղ են գտնվում ՀՀ ում փշատերև ծառերի ամենամեծ անտառը, որտեղ կառուցվել են երեք առողջարաններ բրոնխո-ասմատիկ հիվանդություններով տառապող մարդկանց համար:

- **Եզրակացություն՝** Աշխատանքը կատարելու համար խմբին անհրաժեշտ եղավ մեկ ամիս: Աշխատանքը ղեկավարում էր Ա. Հարությունյանը: Մեր առջև ծառայած խնդիրները լուծելու համար անհրաժեշտ եղավ կատարել մի շարք հետազոտություններ

- **Օգտագործված գրականություն**

<<Աշխարհագրություն 9-րդ դասարան>>

- **Լրացուցիչ տեղեկատվության աղբյուրներ**

<https://www.wikipedia.org>

<https://www.google.com>

<https://airwallpaper.com/map-wallpaper/>

[ՅԷԿ](#)